

Խ. ԱՌՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 93/94

ՀԱՄԱՍԼԱՎՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ԴԴ ԴԱՐԻ 50-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ և 1867Թ.
ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
Հ. Ի. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: haygrig@yandex.ru*

Հոդվածում քննարկվել են 19-րդ դարի 50-60-ական թվականներին Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանյան կայսրությունում համապատասխանության գաղափարախոսության տարածման նոր պատճառներին: Ուսումնասիրվել է ռուսաց հասարակության ներսում համապատասխանական գաղափարաբանության տարաբնույթ դրսևորումները: Անդրադարձ է կատարվել 1867թ. Ռուսաստանյան կայսրությունում անցկացված Սլավոնական ժողովուրդների համագումարին:

Բանալի բառեր. Ղրիմի պատերազմ, համապատասխանություն, Բալկաններ, Մ. Պոգոդին, Վ. Լամանսկի, Սլավոնական ժողովուրդների համագումար:

Ներկայացված է խմբագրություն 15.12.2016թ.

1860-ական թվականներին համապատասխանական գաղափարախոսությունը կրկին վերելք ապրեց: 1853-1856թթ. Ղրիմի պատերազմի տարիներին այս գաղափարախոսությունը լայն տարածում գտավ հասարակական-քաղաքական շրջաններում: Պատերազմում կրած պարտության պատճառով Ռուսաստանը հայտնվեց մեկուսացման մեջ: Ռուսական իշխանությունները պատերազմի հետևանքները վերացնելու համար իրենց ողջ ուշադրությունը դարձրեցին երկրի ներքին կյանքին: Սակայն Ռուսաստանը չէր հրաժարվել ակտիվ արտաքին քաղաքականությունից: Սա Ռուսական կայսրության համար որոշակի դադար էր: Փարիզի հաշտությունից հետո, արտաքին գործերի նորանշանակ նախարար Ա. Գորչակովը 1856թ. կարողացավ Ֆրանսիայի հետ զալ համաձայնության և ստիպել Ավստրիային զորքերը հանել Դանուբյան իշխանություններից, որոնց հարցերը Փարիզի հաշտության պայմանագրով լուծում չէին ստացել: Այստեղ դրությունը լարված էր և Ֆրանսիան մտահոգված էր Ավստրիայի և Թուրքիայի ազդեցության մեծացումից: Ֆրանսիան գիտակցելով, որ կարող է մնալ մենակ և խնդիրներ ունենալ նախկին դաշնակիցների հետ՝ ստիպված էր կարգավորել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Նկատվում էր ֆրանս-ռուսական հարաբերությունների մերձեցում, որը սակայն երկար չտևեց՝ կապված 1863թ. Լեհաստանում բռնկված ապստամբության հետ:

Միաժամանակ սրվում էր դրությունը Բալկաններում, և Ռուսաստանը ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, օգտվելով Օսմանյան կայսրության թուլացումից, ձգտում էր սատար կանգնել իր ազգակից և դավանակից եղբայրներին: 1856թ. իշխան Ա.Մ.

Գորչակովը ոգևորված Օսմանյան կայսրությունում հռչակված բարեփոխումների քաղաքականությունից, Հատտի հումայուն (բարձրագույն հրահանգներ) տեսնում էր տեղի ուղղափառ քրիստոնյաների միջոցով թուրքական տեղական վարչակազմի վրա ազդելու լծակ: «Հատտի հումայունի իրավական հենքի վրա,- ասում է Գորչակովը,- մեր հյուպատոսները կոչված են միավորել ձեռք բերված իրավունքի գիտակցությունը, սակայն պետք է գործեն զգուշաբար, չդավադրդեն վաղաժամ հուզումներ և հոգատար կերպով հարմարեցնեն մեր վարքագիծը հաշտության պայմանագրի ոգով» [1, էջ 51]:

Ահա արտաքին քաղաքական նման պայմաններն էին այն հիմնական պատճառները, որը վերաճեց և արմատավորեց համասլավոնական գաղափարախոսությունը ռուսաց հասարակական-քաղաքական կյանքում:

Սլավոն եղբայրներին օգնելու և ազատագրելու հարցը ռուսաց հասարակությունում քննարկվում էր բարեփոխումների հարցին զուգահեռ: 1858թ. ռուս պատմաբան Մ.Պոգոդինը խոսելով արտաքին խնդիրների մասին ասում է. «Ռուսաստանը ժամանակավորապես փակվել է իր ներքին գործերի մեջ և բարեփոխումների մեջ է տեսնում իր հզոր ապագայի գրավականը» [2, էջ 4]: Սակայն Ղրիմի պատերազմի տարիներին համասլավոնականության գաղափարներով տարված գործիչներին միաժամանակ մտահոգում էր օտար լծի տակ գտնվող ազգակից և դավանակից եղբայրների ճակատագիրը:

1856թ. Պետերբուրգում կազմավորվեց բարեգործական կոմիտե, որի մեջ ընդգրկվեցին երեք տիտղոսակիր կանայք իշխանուհի Գ. Վասիլչկովան, կոմսուհիներ Ն. Պրոտասովան և Ա. Բլուդովան: Նրանց նպատակն էր Բալկանյան թերակղզի ուղարկել գրքեր և եկեղեցական պարագաներ: Այս կազմակերպության գործունեությունը պաշտոնապես ճանաչվեց, այն գործում էր բաց, անգամ իր հաշվետվություններն էր ներկայացնում մամուլում [3, էջ 26]:

Արդեն 1856թ. կեսերին սլավոնաֆիլների խմբակում առաջարկ եղավ Պետերբուրգում և Մոսկվայում կազմավորել միություններ, որոնք կաջակցեն և կլուսավորեն Թուրքիայի տիրապետության տակ գտնվող սլավոններին: Իսկ արդեն 1857թ. վերջին Մ. Պոգոդինն առաջարկեց ստեղծել մի կոմիտե, որը կզբաղվեր պատերազմի ժամանակ տուժած բալկանյան ժողովուրդների օգնությամբ [4, էջ 28]: Այս կոմիտեի ստեղծմամբ շահագրգռված էին նաև կառավարող որոշ շրջանակներ, որոնք Ղրիմի պատերազմի պարտությունից հետո փորձում էին ճանապարհներ փնտրել իրենց ազդեցությունն Օսմանյան կայսրությունում ապրող սլավոնների վրա վերականգնելու համար:

Կոմիտեն իր գործունեությունը սկսեց 1858թ.: 1861թ. կոմիտեի նախագահ, Մոսկովյան ուսումնական օկրուգի նախագահ Ա.Ն. Բախմետևի մահից հետո այն ղեկավարեց Մ. Պոգոդինը: Կոմիտեում ընդգրկվեցին ինչպես սլավոնաֆիլական և պահպանողական ճամբարի ներկայացուցիչներ, այնպես էլ ազատական-արևմտական գաղափարակիրներ: Կազմակերպությունը միանգամից ձեռնամուխ եղավ դրամական միջոցներ հատկացնել սլավոններին, ուղարկել դասագրքեր, օժանդակել սլավոնական թերթերին, հովանավորել սլավոնական առանձին գործիչների, ինչպես նաև սլավոնական ծագում ունեցող ուսանողների [3, էջ 33]: Այս ամենը հետապնդում էր մեկ նպատակ, նորից ուժեղացնել ռուսական ազդեցությունը հարավային սլավոնների շրջանում:

Սլավոնաֆիլ Ի. Ակսակովը 1861թ. փետրվարի 23-ին կոմսուհի Ա. Բլուդովային գրած նամակում առաջարկում է սլավոնների շահերը պաշտպանելու նպատակով նոր ամսագիր հիմնել [5, թ. 8 շրջ.]: Նա նաև համագործակցում էր Սլավոնական կոմիտեի հետ և գտնում, որ կոմիտեի հիմնական խնդիրը պետք է լինի սլավոններին լուսավորելու հարցը [5, թ. 11]: Ըստ Ի. Ակսակովի սլավոնական ժողովուրդները պետք է ազատագրվեն նյութական և հոգևոր ճնշումներից, նրանց պետք է տալ հոգևոր ինքնուրույնություն, և այդ

ամենը պետք է իրականացվեր ռուսական արծվի հզորագույն թևի հովանու ներքո «ահա Ռուսաստանի պատմական առաքելությունը, բարոյական իրավունքը և պարտականությունը» [6, էջ 500]:

1848 թվականից հետո առաջին անգամ 1862թ. նորից որոշվեց հրավիրել Համասլավոնական համագումար: Համագումարի կազմակերպիչները այդ տարեթիվը ընտրել էին սլավոնական գրերի տարածման հոբելյանական 1000 ամյակի կապակցությամբ: Սակայն որոշակի տարաձայնությունների պատճառով որոշվեց համագումարը հրավիրել հաջորդ տարի Պրահայում, որը նույնպես չկայացավ: Համագումարը կայացավ միան 1867թ. Ս.Պետերբուրգում:

Մինչ համագումարի կայանալը ռուսաց հասարակությունում արդեն լայնորեն տարածված էին համասլավոնականության գաղափարները, որոնք դրսևորվում էին և՛ ծայրահեղ, և՛ չափավոր տեսակետներով: Ցարական կառավարությունն ամեն ինչ անում էր, որ սլավոնական ժողովուրդները միավորվեն իր հովանու ներքո, և ռուսաց լեզուն սլավոնական բոլոր ժողովուրդների համար դառնա միավորիչ գործոն: Դեռ 1864թ. համասլավոն, ակադեմիկոս Վ. Լամանսկին ասում էր, որ ռուսաց լեզուն սլավոնական ութ բարբառներից միակն է, որը կարող է ստիպել մնացած բարբառներին ձերբազատվել կախյալ, ողորմելի վիճակից [7, էջ 185]: Լամանսկին այստեղ նկատի ուներ սլավոնների գերմանականացումը և մաջարականացումը:

Բնականաբար սլավոնական մնացած ժողովուրդներն այս միտքը չէին կարող ընդունել: Նրանք մտավախություն ունեին, որ գործընթացն անմիջականորեն ոտնձգություն է իրենց մշակութային և քաղաքական ինքնությունության նկատմամբ: Չեխ պատմաբան և քաղաքական գործիչ Ֆ. Պալացկին շատ ճիշտ է նկատում, որ ոչ մի ազգ «չի լքի իր լեզուն» և չի դառնա «ռուսական հպատակ» [8, էջ 777]:

Փաստորեն ռուսական կողմի բոլոր փորձերը միավորել սլավոնական ժողովուրդներին մեկ գրական լեզվի հովանու ներքո տապալվեցին: Սա այսպես կոչված համասլավոնականության «գրական» բաղադրիչն էր:

Գոյություն ուներ նաև այս գաղափարախոսության «քաղաքական» բաղադրիչը: Սոցիոլոգ, մշակութաբան Ն. Դանիլևսկին մշակեց պատմամշակութային զարգացման հայեցակարգը, համաձայն որի Ռուսաստանին ի սկզբանե տրված է եղել լինել ռոմանագերմանական քաղաքակրթության հակառակորդը: «Եվրոպան,- գրում է Դանիլևսկին,- չի ընդունում մեզ, որպես իրենք: Նա Ռուսաստանին և սլավոններին դիտում է որպես օտար, դրա հետ միասին չի կարողանում ծառայեցնել իրեն, որից կունենա իր շահը»: Նա գտնում է, որ Ռուսաստանն այնքան մեծ և հզոր է, որ պետք է դառնա եվրոպական քաղաքակրթության կրողներից մեկը [9, էջ 365]:

Ն. Դանիլևսկու հետ համամիտ չէր պատմաբան Ս. Սոլովյովը, որը գտնում էր, որ Ռուսաստանը եվրոպական պետություն է, որը Պյոտր Առաջինի ժամանակներից սկսած, առաջանալով դեպի ծովերը դարձավ ժամանակակից Եվրոպայի անբաժան մասը: Ավելին, այդ առաջխաղացումը ուրվագծեց ժամանակակից Եվրոպան և Ասիան, որոնց հազարամյա հակամարտությունն էլ դարձավ սլավոնների համար այդքան կարևոր Արևելյան հարցի բովանդակությունը [10, էջ 307]:

Ընդհանուր առմամբ, ինչպես Ղրիմի պատերազմի ժամանակ, այնպես էլ այժմ Ռուսաստանի համասլավոնական գաղափարախոսության հենարանը մնում էր սլավոն եղբայր ժողովուրդների ազատագրման հարցը: Դանիլևսկին գտնում էր, որ Ռուսաստանը պետք է ստեղծի Համասլավոնական Դաշնություն: Նմանատիպ գաղափար դեռ Ղրիմի պատերազմի ժամանակ առաջ էր քաշել Ա. Գերցենը: Սակայն ի տարբերություն վերջինիս, Դանիլևսկին ստեղծվելիք դաշնությունը չէր տեսնում միայն հավատակից ու ազգակից ժողովուրդների միավորմամբ, այլ ավելի առաջ գնալով, հունգարներին նույնպես ցանկանում էր տեսնել այդ պետության մեջ: Իսկ նոր միության մայրաքաղաք պետք է

դառնար Կոստանդնուպոլիսը: Այն ուղղափառության կենտրոնն էր, և նրա ռազմավարական ու տնտեսական դիրքը շատ հարմար էր [9, էջ 360]: Այստեղ պետք է նկատենք, որ համասլավոնական գաղափարախոսության մեջ արդեն ընդգծվում է ուժացման ձգտումը՝ իրենց ենթարկել և ձուլել ոչ ազգակից ժողովրդի ու պետության:

Փիլիսոփա և դիվանագետ Կ. Լեոնտևը, որը նույնպես համասլավոնական գաղափարախոսության կրող էր, Ն. Դանիլևսկու հետ համամիտ չէր: Ըստ նրա հնարավոր չէր քաղաքականապես կիրառելի դարձնել սլավոնական դաշնության գաղափարը, քանի որ սլավոնները գերմանացիների նման չեն կարող միավորվել. «սակայն քաղաքական համասլավոնականության հետ պետք է հաշվի նստեն բոլորը. ավստրիացիները, թուրքերը, գերմանացիները և մենք, քանի որ նա իր գոյության մեկ փաստով իր մեջ ներառում է համաեվրոպական անհասկանալի իրականության մեջ այն հզոր քայլը, որը բոլորն անվանում են ժողովրդավարական առաջընթաց» [11, էջ 235]: Փաստորեն մի կողմից դեմ լինելով եվրոպական սահմանադրականությանը [12, էջ 461], մյուս կողմից Լեոնտևը փորձում էր համահունչ քայլել Եվրոպայի հետ՝ հանուն գաղափարի իրականացման:

Համասլավոնական գաղափարներով տարված էր նաև արմատական հայացքների տեր Մ.Բակունինը, որը 1862թ. «Ռուս, լեհ և բոլոր սլավոն բարեկամներին» ուղղված նամակում կոչ է անում հեղափոխության և համասլավոնական դաշնային կառավարման համակարգ ստեղծել՝ առանց թագավորի [13, թ. 7]:

Այսպիսով, համասլավոնականության գաղափարախոսության սուր ծայրն ուղղված էր ռոմանագերմանական քաղաքակրթության դեմ: Սակայն 1866թ. սկսած այն ավելի հստակ արդեն ուղղվեց գերմանական ժողովրդի դեմ՝ մի կողմ թողնելով ու երկրորդական համարելով լեհական հարցը: 1866թ. հուլիսին Սադովայի ճակատամարտում պրուսական բանակը ջախջախեց ավստրիական զորքը, նույն թվականին ստեղծվեց Հյուսիս-Գերմանական միությունը: Ալեքսանդր Երկրորդը շտապեց Բեռլին ուղարկել շնորհավորական հեռագիր: Եթե ռուսաց կայսրը ողջունեց Վիլհելմ Առաջինի հաղթանակը և անգամ հաճույք ապրեց երբեմնի բարեկամի՝ Ավստրիայի ապերախտ կայսրի պարտության համար, ապա շատ ռուս պետական գործիչներ, հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներ խիստ անհանգստացած էին Պրուսիայի նոր հաղթանակից և հզորացումից: Գորչակովը դիմեց մեծ տերություններին՝ պաշտոնապես առաջարկելով նրանց Պրուսիայի հավակնությունները քննարկելու նպատակով գումարել միջազգային վեհաժողով, բայց նրա նախաձեռնությունն աջակցություն չգտավ [14, էջ 363]:

Գերմանիայի վերամիավորման գործընթացն անհանգստություն առաջացրեց ռուսական համասլավոնների մոտ, որոնք գիտակցում էին, որ Գերմանիայի հզորացումն անմիջականորեն սպառնում է նաև Ռուսաստանին:

Ժամանակի մտայնությունն արտահայտված էր 1866թ. օգոստոսին Փարիզում գտնվող Վ. Լամանսկուն գրված նամակներից մեկում, որտեղ վերջինիս հայտնվում է, որ Բիսմարկը բալթյան գերմանացիների համար դարձել է կիսաաստված: Նամակի հեղինակն առաջարկում է փակել Դորպարտի համալսարանը, իսկ ուսանողներին տեղափոխել Պետերբուրգ. քանի որ «գերմանական կրթության վրա պետությունը ծախսում է տարեկան 200 հազար ռուբլի: Պետական գանձարանը նրանց վրա չպետք է գումար ծախսի» [15, թ 6]: Դորպարտի համալսարանի ֆինասավորման խնդրին անդրադարձավ նաև «Московские ведомости» թերթը, որը պետության կողմից նման ուշադրությունը համարում էր չափազանցված: Մանավանդ դա այն դեպքում, երբ այնտեղ ռուսերենը համարվում էր մեռած լեզու: Գումարների մեծ մասը ծախսվում էր գերմանական գիտության զարգացման համար [16]:

Ռուսաց հասարակության համար այս իրավիճակում անհանգստացնող էր Օստգեյսկյան (Բալթյան) երկրամասի գերմանացիների աշխուժացումը: 1866թ. գաղտնի խորհրդական, օտարերկրյա դավանանքի հոգևոր գործերի դեպարտամենտի տնօրեն Վ.

Սկրիպիցկին Պետական խորհրդի անդամ, Արևելյան Սիբիրի նախկին նահանգապետ Ն. Մուրավյով-Ամուրսկուն գրած նամակում իր մտահոգությունն է հայտնում գերմանացիների աշխուժացման վերաբերյալ: Նրան ավելի շատ մտահոգում է, որ Ռուսաստանի տարածքում գերմանացիներն ավելի կրթված և լուսավորված են, քան ռուսները: Իսկ այդ ամենի մեջ անմիջականորեն մեղադրում է իշխանություններին, քանի որ «կառավարությունը ռուսական նահանգներում մեկ միլիոն ռուս բնակչի համար պահում է մեկ, իսկ այս երկրամասի (Բալթյան -Չ.Գ.)՝ 200 հազար գերմանացու համար մի շարք գիմնազիաներ»: Նա Ռուսաստանի թիվ մեկ թշնամի համարում էր գերմանացիներին, քանի որ նրանք խելացի էին [15, թ. 1-2]:

Ռուսաց հասարակությանը նաև մտահոգում էր այն փաստը, որ Բալթյան երկրամասում հրատարակվում է 25 անուն թերթ և հանդես գերմաներեն, լատիշերեն և էստոներեն լեզուներով, իսկ ռուսերեն որևէ մի տպագրական օրգան գոյություն չունի [17]:

Միաժամանակ ռուսաց հասարակության տարբեր շերտերում զանազան խոսակցություններ էին տարածվում, թե իբր Բալթյան երկրամասում ռուսներին ճնշում են և անգամ Ռիգայում գերմանացիները ծեծի են ենթարկել ռուսներին: Անգամ զարմանում են, որ ցար Ալեքսանդր Երկրորդն այդքան հանդուրժող է և քայլեր չի ձեռնարկում գերմանացիների նկատմամբ: Տարածված լուրերի համաձայն, իբր Ալեքսանդր Երկրորդը սպառնացել է գահաժառանգին գահից զրկել, եթե վերջինս աշխատի գերմանացիների դեմ [15, թ. 28]: Միաժամանակ ռուսաց պահպանողականներին մտահոգում էր նաև այն փաստը, որ վարչական պաշտոններում գերմանացիները մեծ թիվ են կազմում: «Ե՛վ դատարանները, և՛ վարչակազմը, և՛ բժշկությունը, և՛ ուսումնական մասը, և՛ դեղատունը, և՛ հեռագրատունը, և՛ երկաթուղին լցված են գերմանացիներով» [15, թ. 15]:

Այսպիսով, աստիճանաբար սաղմնավորվում էր ատելությունը դեպի գերմանական ժողովուրդը և Գերմանիան, որը դեռ պետք է խորը արմատներ գցեր և դառնար ինչպես երկու ժողովուրդների, այնպես էլ համաշխարհային հանրության համար դժբախտություն:

Լայն տարածում գտած համասլավոնական գաղափարախոսության պայմաններում, 1867թ. Ռուսաստանի Բնագիտության սիրահարների ընկերության կողմից Մոսկվայում կազմակերպվեց Համառուսաստանյան ազգագրական ցուցահանդես, և միաժամանակ հրավիրվեց Սլավոնական ժողովուրդների համագումար: Այն անցկացվում էր կառավարության անմիջական հովանավորության ներքո: Երրորդ բաժանմունքը ոչ միայն համասլավոնների համագումարի մասին էր տեղեկություններ ներկայացնում իշխանություններին, այլ նաև նրա պատվիրկանների գործունեությունն ու տեղաշարժերը վերցրել էր իր հսկողության տակ [18]:

Այս համագումարը մեծ ոգևորություն էր առաջացրել ռուսաց որոշակի հասարակական-քաղաքական շրջանակներում, իսկ Պետերբուրգի բնակիչները բավական ջերմ ընդունեցին պատվիրակներին [18, թ. 2]: Ռուսական կողմը ցանկանում էր ցույց տալ, որ այս համագումարի անցկացումն իր մեջ պարունակում է միայն բարի նպատակներ և չկա թշնամանք եվրոպական երկրների դեմ: «Санкт-Петербургские ведомости» թերթը ողջունելով համագումարը և Ռուսաստանի դրական ազդեցությունը սլավոնական աշխարհի կազմավորման գործում, գրում է. «ռուսական սլավոնականությունը երբեք իր մեջ չի պարունակել սարսափելի տարրեր, երբեք չի վտանգել եվրոպական քաղաքակրթությանը» [19]: Համագումարին մասնակցում էին ինչպես պետական այրեր, այնպես էլ ռուսաց հասարակական-քաղաքական նշանավոր գործիչներ: Նրանց թվում էր Ժողովրդական լուսավորության նախարար կոմս Ա. Տոլստոյը [18, թ. 5]:

Համագումարին հրավիրվեցին նաև սլավոնական ժողովուրդների ներկայացուցիչներ, հանգամանք, որն առաջացրեց ավստրիական իշխանությունների գայրույթը: Ռուսական կառավարությունը մեղադրվեց Ավստրիական և Օսմանյան կայսրություններում ապրող սլավոն ժողովուրդներին իրենց դեմ տրամադրելու մեջ:

Սակայն արտաքին և ներքին գործերի նախարարներ Ա. Գորչակովը և Պ. Վալուևը ինչպես հարկն էր չարձագանքեցին ավստրիական իշխանություններին: Ավստրիան փորձեց ռուսական իշխանություններին հակակշռել նմանատիպ միջոցառման անկացմամբ Գալիցիայում: Անցկացման վայրը պատահական չէր ընտրվել: Հենց Գալիցիայում կազմակերպվելիք հավաքով Ավստրիան Ռուսաստանին սպառնում էր լեհական հարցով: Սակայն Գորչակովը պատասխանելով Ավստրիային վստահեցրեց, որ եթե Գալիցիայում նման միջոցառում անցկացվի, ապա Ռուսաստանից շատ քչերին այն կհետաքրքրի [3, էջ 172]:

Համագումարի պատվիրակները Ռուսաստան ժամանեցին 1867թ. մայիսի 8-ին: Սլավոնական պատվիրակությունը բաղկացած էր 69 պատվիրակներից [18, թ. 2]: Հաջորդ օրը, ի պատիվ սլավոն հյուրերի, մատուցվեց հանդիսավոր ճաշ: Ճաշկերույթի հանդիսավոր բացումը կատարեց ժողովրդական լուսավորության նախարար կոմս Ա. Տոլստոյը: Նա խոսեց սլավոն ժողովուրդների արյունակցական կապի, սլավոնական ոգու և գիտության մասին: Ողջունեց հավաքը՝ միաժամանակ ասելով, որ դա քաղաքական որևէ տարր չի պարունակում: Սակայն վերջում ավելացրեց, որ այս հավաքում տեսնում է սլավոնական ցեղի ապագան [19]: Հավանաբար իշխանությունը ներկայացնող կոմս Տոլստոյը բացահայտ չէր ուզում իր քաղաքական հայտարարություններով սրել առանց այն էլ լարված միջազգային հարաբերությունները: Միաժամանակ հստակ հասկացնել տվեց, որ Ռուսաստանը ցանկացած պարագայում իր արյունակից եղբայրների ապագայի համար պատրաստ է պայքարել մինչև վերջ:

Կոմս Տոլստոյի ելույթից հետո արտասանեցին Տյուտչևի համասլավոնական ոգով գրված բանաստեղծությունը, ելույթ ունեցավ չեխ ազատական գործիչ, իրավաբան Ռիգերը, ով քննադտեց Գերմանիային՝ մեղադրելով նրան հանիրավի սլավոններին ճնշելու մեջ: Ըստ Ռիգերի սլավոններն են եղել այն ժողովուրդները, որոնք իրենց կրծքով պաշտպանել են Եվրոպան թաթարներից, թուրքերից և մաջարներից: Վերջում Ռիգերը ավարտելով ելույթն ասաց. «Եթե մենք չենք կարողանում միանալ նյութապես, ապա կմիավորվենք հոգեպես» [19]:

Հաջորդ օրերին նույնպես եղան բազմաթիվ միջոցառումներ: Պատվիրակները այցելեցին Էրմիտաժ, ներկա եղան Պետերբուրգի Մարինյան թատրոնում և այլն: Սակայն նախատեսվող գլխավոր միջոցառումը դա Ալեքսանդր Երկրորդի հետ հանդիպումն էր Յարսկոյե Սելոյում, որը տեղի ունեցավ մայիսի 15-ին: Ընդունելության ժամանակ կայսրը մոտենալով պատվիրակներին, նրանց հետ ջերմ ու մտերմիկ զրույցի բռնվեց: Վերջում ողջ պատվիրակության անունից ելույթ ունեցավ չեխ բանասեր և գրող Պ. Շաֆարիկը, որն իր շնորհակալությունը հայտնեց ջերմ ընդունելության համար՝ այն համարելով «բարյացկամ նշան, որն ուրախությամբ լցրեց սլավոնների սրտերը» [20]:

Ս.Պետերբուրգի համագումարին ի նշան բողոքի չմասնակցեցին լեհերը, որոնց հիշողության մեջ դեռ թարմ էին 1863-64թթ. ապստամբության դաժան ճնշումը: Լեհերի որդեգրած գծին քննադատորեն մոտեցավ ռուսական մամուլը: 1867թ. մայիսին, համագումարի նախօրեին, «Санкт-Петербургские ведомости» թերթում պատմաբան Իվան Լաշնյուկովը տպագրեց «Славянская идея и ее судьба» վերտառությամբ մի հոդված, որտեղ հեղինակը քննադատում էր լեհերին, որովհետև նրանք դեռ Պրահայի համագումարին ցանկանում էին վերականգնել իրենց ազգայինը, մնացյալ սլավոնական ազգերի հաշվին [19]:

1867թ. համագումարը կոնկրետ որևէ որոշում չընդունեց և բավարարվեց առանձին գործիչների հայտարարություններով: Ռուս համասլավոնների այն գաղափարը, որ պետք է ստեղծել համասլավոնական պետական մեկ լեզու՝ չընդունվեց սլավոնական մնացյալ ժողովուրդների կողմից: Քաղաքական հարցերում նույնպես ընդհանուր համաձայնության չեկան: Սակայն հասկանալի է, որ ռուսական իշխանություններն արևմտյան երկրներին

ցույց տվեցին սլավոնական ժողովուրդների համերաշխությունը: Լարված միջազգային իրադրության պայմաններում, երբ 1866թ. Բալկաններում նորից սլավոնական ժողովուրդներն ապստամբել էին Օսմանյան կայսրության դեմ, իշխանություններն այս համագումարի միջոցով փորձեցին ռուսաց հասարակության ուշադրությունը հրավիրել դեպի ազգակից սլավոնական ժողովուրդների ճակատագիրը:

Այսպիսով, Ղրիմի պատերազմի ավարտից հետո, բալկանյան և սլավոնական ժողովուրդների ազատագրական շարժումները ռուսաց հասարակական-քաղաքական կյանքում ավելի արմատավորեց համասլավոնականության գաղափարախոսությունը: Ռուս համասլավոնները ոչ միայն ազգակից և դավանակից եղբայր ժողովուրդների ազատագրության մեջ էին տեսնում իրենց գաղափարների իրականացումը, այլև Ռուսաստանի գերակայության ներքո այդ ժողովուրդների հետ միասին համասլավոնական մեկ պետություն ստեղծելու մեջ: Միաժամանակ, ռուս համասլավոնները Ռուսական կայսրության տարածքում՝ հատկապես արևմտյան հատվածում, որը սահմանակից էր «ռոմանագերմանական» քաղաքակրթությանը, ցանկանում էին տարածել ուղղափառություն և տեղի ժողովուրդներին ռուսականացնել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Виноградов В.Н., Балканская эпопея князя А.М. Горчакова, Москва, Наука, 2005, 316с.
2. Бестужев-Рюмин К., М.П. Погодин. Статьи политические и польский вопрос (1856-1867), С.Петербург, Типография В.Безобразова, 1878, 8с.
3. Никитин С.А., Славянские комитеты в России в 1858-1876 годах, Москва, МГУ, 1960, 362с.
4. Истомин Ф.М., Краткий очерк деятельности Санкт-Петербургского Славянского благотворительного общества за 25 лет его существования. 1868-1893, С.Петербург, С.Петербургское славянское благотворительное общество , 1893, 80с.
5. Российский государственный архив литературы и искусства, ф. 72 (Блудовы), оп. 2, д. 12
6. Егоров Б.Ф., О национализме и панславизме славянофилов. (с. 491-504) // Из истории русской культуры, т.5. (XIXв.), ч.1, Егоров Б.Ф., Очерки по русской культуре XIX века. ч.2, Статьи по типологии и истории русской культуры, Москва, Языки русской культуры, 1996, 844с.
7. Ламанский В.А., Национальности италянская и славянская в литературном, политическом отношениях, Отечественные записки С.Петербург, 1864, N11, с.166-188.
8. Пыпин А.Н., Славянский вопрос по взглядам Ив. Аксакова, Вестник Европы, С.Петербург, 1886, N8, с. 763-807.
9. Данилевский Н.Я., Россия и Европа. Взгляд на культурные и политические отношения Славянского мира к Германно-Романскому, Москва, Институт русской цивилизации , 2008, 816с.
10. Соловьев С.М., История падения Польши. Восточный вопрос, Москва, Астрель-АСТ, 2003, 372с.
11. Леонтьев К.Н., Восток, Россия и Славянство, Москва, Республика, 1996, 799с.
12. Леонтьев К.Н., Дипломатические донесения, письма, записки, отчеты (1865-1872), Вступ. статья А. В. Торкунова, К. М. Долгова, Москва, Росспэн, 2003, 527с.
13. Государственный архив Российской Федерации ф.109, с/а, оп.1. д. 367.
14. Մուրադյան Մ., Մինասյան Է. Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Եր., ԵՊՀ, 2005, 562էջ:
15. Государственный архив Российской Федерации ф.109, с/а, оп. 3а, д. 109.
16. Московские ведомости, 1867, N 97.

17. Санкт-Петербургские ведомости, 1867, N 101.
18. Государственный архив Российской Федерации, ф. 109 с/а оп. 4а, д. 413.
19. Санкт-Петербургские ведомости, 1867, N 129.
20. Санкт-Петербургские ведомости, 1867, N 133.

РЕЗЮМЕ
ПАНСЛАВЯНСКАЯ ИДЕОЛОГИЯ В РОССИЙСКОЙ ИМПЕРИИ 50-60 ГГ. 19ГО ВЕКА И
СЪЕЗД СЛАВЯНСКИХ НАРОДОВ В 1867 ГОДУ
А.И.ГРИГОРЯН

После Крымской войны, в 50-60-х годах 19го века в новых условиях внешней политики Российской империи в общественно-политической жизни внедрилась и возродилась идеология панславизма. В 1862 году, после 1848г. в первые было принято решение созвать съезд панславистов. В российской обществе до созыва съезда широко были распространены идеи панславизма, которые проявлялись с точки зрения как экстремистских, так и умеренных. В 1867г. созданный Съезд славянских народов в русской общественно-политических определенных кругах произнес большое воодушевление. Но идея русских панславистов создать единый панславянский язык, остальные славянские народы не признали. Таким образом съезд никаких конкретных решений не принял и удовлетворился с объявлениями отдельных деятелей.

SUMMARY
THE IDEOLOGY OF PAN-SLAVISM IN THE RUSSIAN EMPIRE IN 50-60'S OF THE 19TH
CENTURY AND THE CONGRESS OF SLAVIC NATIONS IN 1867
H.I.GRIGORYAN

In 50-60's of the 19th century after Crimean War, under the new conditions of external policy of the Russian Empire, the ideology of Pan-Slavism was revived and rooted in the Russian social-political life. In 1862 for the first time after 1848, a decision was made to hold a Pan- Slavic Congress. Before the Congress, the ideas of Pan- Slavism expressed by both extreme and moderate point of views had already been widely spread in Russian society. The Congress of Slavonic Nations held in 1867 had caused a great enthusiasm among the certain spheres of Russian social-political life. However, the idea of Russian Pan-Slavism to create an official Pan-Slavic common language was not accepted by other Slavonic nations. Hence, a specific decision had not been made by the Congress and it got by with the statements made by some political figures.